

«Գրական Քրոնիկը» արձանագրուածիւնն է մտերիմ, անկեղծ խօսակցութեան մը որ տեղի կ'ունենայ իր հեղինակին ու պայն շրջապատող գիրքերուն եւ անոնց մէջ դարանակալ պահուըտած գրողին միջեւ: Կիրթ ու լուրջ՝ այդ խօսակցութիւնը ոչ կը դատէ, ոչ կը կրթէ ոչ ալ կը պուարժայնէ մարդիկ: «Քրոնիկը» խօսքի կը բռնուի գրքին հետ սանկ կէս կամ մէկ ժամ մը, «հալը քէֆը» կը հարցնէ, յետոյ ապին գործերուն մասին կը խօսին, հին օրերը կը յիշեն ու ի վերջոյ գիրքը հրաժեշտ կ'առնէ՝ ջարուենակելու իր անիմաստ վապը դէպի մոռացումի մեծ երկրամասի գաւիթը, սպասելու իր հերթին: Ժամանակին, այսինքն ասկէ կէս դար առաջ, Սփիւռքի (այն ժամանակ մարդիկ «Սփիւռք» բառը չէին գործածածեր այլ «Արտասահման» կ'ըսէին, բառ մը որմէ դուրս էր ոչ միայն Նայաստանը այլ նաեւ աշխարհի մնացեալ մասերը, ի բաց առեալ Փարիզը որ արդէն այս աշխարհի մէջ չէր գտնուեր) գրական հրապարակի վրայ գրախօսողներ կային որոնք իրենց շուքը կը պտտցնէին գրական հանդէսներու ետեւի էջերուն երկայնքին (Գուրգէն Միթարեան, Նայկ ժամկոչեան, Նրանդ Բալուեան եւ ջատ մը այլ գրողներ) վառ պահելով որոշ աւանդութիւն մը որ այսօր գոյութիւն գրեթէ չունի: Մեր ներկայ օրերուն այդ պերճանքը չի տրուիր գրողին, մեր միջավայրը ջատ աւելի դաժան ու մրցակցական է ու գրողը հրատարակիչ ըլլալէ ետք՝ գրախօսող, քննադատ ու հանրութիւն ալ պէտք է ըլլայ: Ամէն մարդու գործը չէ ասիկա եւ միայն ուժովները կրնան տոկալ լուրութեան եւ արհամարհանքին, միայն տաղանդն է որ կրնայ անտեսել դառնութեան փորձութիւնը, գնահատանք եւ արժեւորում գտնելու համար պէտք եղած քննանքը, մուրացկանութիւնը, միայն տոկուն արուեստագէտն է որ իր ներքին աշխարհի տուած ապատութիւնը կրնայ օգտագործել նոր տիպերքներ ստեղծելու:

Այսպէս է որ գիրքեր ու հեղինակներ կը նոյնանան սեղանին վրան, ետ պիրար կը գտնեն եւ ինչպէս ամէն մարդկային էակ սոսկական արժէք մը ունի՝ որքան ալ աննշան, արհամարհելի ու վրիպած ըլլայ ան՝ այնպէս ալ ամէն գիրք իր յատուկ խօսքը ունի: «Քրոնիկը» այդ մարդ-գիրք էականներուն է որ ականջ կու տայ, հետեւելով սակայն երկու հիմնական սկզբունքներու -- այդ «խօսքը» հայութեան մասին բան մը պիտի ըսէ, եւ, երկրորդ՝ գրական որոշ ծաջակի մը փաստը պիտի բերէ:

Պրն. Սամուէլ Մկրտիչեան չի մտներ Նայ Գրականութեան մէջ ու իր հատորը, «Նոզին Կանչը» (Պէյրուք, 1988), հապար գուրգուրանքով պատրաստուած, ջատ հաւանաբար Պէյրուքի դժողքին մէջ սրբագրուած, ջարուած, տպուած ու լոյսին բերուած՝ ծակատագրուած է Սփիւռքի մէկ հեռաւոր, տարտամող գաղութին ակումբի մատենադարանին մէկ անկիւնը մնալու, իր սրտակեղեք կանչը խեղդուած, իր պնիւ, անկեղծ պգացումները երբեք չանցած ուրիշ հայերու որոնք իրեն նման պիտի կանչեն պիրար գիրքով, խօսքով, նայուածքով կամ լուրութեամբ, ու յուսահատ՝ աչքը ետին, անցնին գերեզման ու տանին հետերնին: Անշուշտ Պրն. Մկրտիչեանին համար ջատ ալ կարեւոր չէ գրականութեան պատմութեան անուանացանկը եւ իր անունին հոն գտնուիլը: Ահա իր հերոսը որուն հետ իր նոյնացումը տողերում միջեւ գրուած է

« - «Այս աչքերս Գէորգ Չավուշն են տեսեր»... :

Մկրտն ի պատիւ Գէորգին կը սկսէր աւելի խանդավառ ու աւելի բարձրաձայն երգել: Ու այդ երգը կը պանծացնէր հերոսին քաջագործութիւններն ու հայրենասիրութիւնը: Եւ երբ երգը կը հասնէր հոն, ուր Գէորգ կը խրախուսէր իր քաջերը՝ անոնց ըսելով. « «Պըրա ամ պըմրըն վալաթ պըմինէ» » (Թող մենք մենինք, բայց հայրենիքը մնայ), ահա այն ատեն, խաչոյին մէջ ծուռը

աւելի կը ծռէր: Ալ չէր կրնար նստած տեղը մնալ:
Ոտքի կ'ելլէր: Հագած ջալվարը աւելի կը լայննար:
Նաչոն աւելի կը խոջորնար ու կը սկսէր երթալ-գալ
փուռին նեղ տարածութեան վրայ: Հոգին խոռվքի ելած,
ինչպէս երկաթեայ վանդակի մէջ արգելափակուած առիւծ,
յանկարծ կը պոռթկար.

- Ես թուրքին մերը...: Ես աջխարհին ծակատին եմ
թքեր: So ես...

- Նաչօ', Նաչօ', կեցիր...

Քայց ինչպէ՞ս թէ կեցիր, Նաչոն պիտի քֆրէր, մինչեւ
որ հայու այրած սիրտը յագենար:

Ու այսպէս, ժամանակը կը քալէր, օրը կը մթննար: Այդ
մարդիկը, այդ մթնոլորտին մէջ, կը վերանային, կ'երթային
անցեալին՝ իրենց հին ապրումներուն, իրենց հին սէր-
երուն, որ անբաժան, բայց անուշ մասնիկներն էին իրենց
չուրիչան, իրենց իսկուրեան: Ու այդ ապրումով, իրենց
կեանքը նորէն կը գունաւորուէր, նորէն կ'անուշնար:
Կ'ըլլար գեղ, կ'ըլլար տալալ, կ'ըլլար կենսատու արեւ՝
պայծառ եւ յուսալի: Ու փուռի մարդոց աչքին, իրենց
լեռներուն այդ գեղջկական կեանքը կը դառնար բոլորէն
գեղեցիկ, բոլորէն գերիվեր:»

Ապրումի իր բուռն պահերուն, Մկրտիչեանի ոճը կը հասնի, տեղ
տեղ, Բ. Նուրիկեանի ու Նոյնիսկ Համաստեղի ոճին ջինջ անկեղծութեան,
իրաւութեան: Մարդ անպզաւաբար կ'ուրախանայ որ Պրն. Մկրտիչեան
արհեստագէտ գրող չէ ու պահած է բառերուն կուսութիւնը, անոնց ինք-
նաբուխ, անպաճոյճ բնականութիւնը: Ու մօտ երկու հարիւր էջ այս պարզ
բայց կենդանի թափը կը քալէ, ընդհանրապէս ծանրաբեռնուած աւելորդ
յուզականութեամբ ու մանրամասնութիւններու բազմութեամբ մը որունք
կ'ուռնցնեն կեանքի բաժինը առանց սակայն խորքը կամ եղերականութիւնը
աւելցնելու: Զսանվեց պատմուածքներուն վերնագիրներէն կարելի է
հասկնալ ինչ պնիւ հոգի, ինչ մաքուր ու միամիտ միտք մը կը գործէ
բառերուն ետին -- «Ելի'ր, երթանք մենք Սասուն», «Մեր հայրերը», «Հողին
Կանչը», «Այս հողերուն մէջ հայու սիրտ չկայ», «Հայը մնայուն դամբան
չունի», «Սասնայ լեռներու կարօտով», «Էկիր իմ երբ հայ մեռնիմ», «Հայ-
րիկին սիրտը» եւ այլն: Այնքան անմեղ ու անփորձ է գրականութիւնը որ
մարդ պիտաթափ կ'ըլլայ...:

Յայտնի է հիմակուրնէ այս հատորին հանրութիւնը -- ոչ հանած-վա-
րած գրագէտները, ոչ վրիպած գրողները որոնց յաճախ գրոց-բրոց անունը
կու տանք չարամտօրէն, ոչ ալ հայ yuppies-ները Սիլիքոն Վալիի բնակիչ՝
կամ համալսարանի դասախօս՝ որոնք իրենց հայութիւնը տարաջխարհիկ յատ-
կանիջի վերածած են, այլ հսկայ բազմութիւնները հին, միաճոյլ հայերու
որոնց բուխ ու տաք սրտերը չեն դիմանար հայկականութեան այդ յուզիչ
տեսարաններուն:

Արդիականութեան մեր փնտռտուքը մեզ կը տանի ուրիշ թեկնածուի մը
որ հակառակ իր արտաքին կերպարանքին շատ չի տարբերիր Պրն. Մկրտի-
չեանէն իր գրական աջխարհահայեացքով: Կ'ակնարկենք Պրն. Վահրամ
Հաճեանի որուն «Ծակատագիր» հատորը անցեալ տարի լոյս տեսաւ Երեւա-
նէն: 210 էջնոց մանրածաւալ հատոր մը որ սակայն ջնորհապարգուած է
Հայաստանի գրական սակարանի էն սուրճ թէ աժան անուններու նախաբան-
ներով, մէկը ամէնագոյ, բազմակենցաղ Պրն. Վահագն Դաւթեանէն, միւսը
Համօ Սահեանէն: Պէտք կ'ա՞ր այսքան «ազդեցութեան» (Պէյրութի մէջ հին
երջանիկ օրերուն «ուսսթա» բառը կը գործածէինք որուն համար կը
դիմէինք գրասենեակի դռնապանէն մինչեւ հանրապետութեան նախագահը,
գործելակերպ մը որուն ծանօթ են, ըստ երեւոյթին, Հայաստանցիք ալ)
մանաւանդ որ Պրն. Հաճեան փորձուած ու ծանօթ անձ մըն է գրական հրա-
պարակին վրայ: Պատասխան չունինք հարցումին: Մեզի կը թուի թէ այդ
երկու պատուական մարդոց ներկայութիւնը կը խրտչեցնէ ընթերցողը ո

անմիջապէս կը պահայ միջամտութիւն մը հոն՝ ուր ինք կ'ուզէ մաքուր եւ
ազատ պահել իր միտքը բանաստեղծութեան վայելումին եւ արժեւորումին
մէջ: Եւ ի լրումն ամէն ինչին՝ վեց հոգինոց խմբագրական կազմ մըն ալ
կը հսկէ հատորին վերջին էջին վրայ (խմբագրութեան վարիչ, խմբագիր,
գեղարուեստական խմբագիր, նկարիչ, տեխնիկական խմբագիր, վերստուգող
սրբագրիչ...): Սա ինչ~ վատնում է սուղ ժամանակի՝ մանաւանդ Պրն.
Ստեփան Թոփճեանի նման բանասէրի մը համար:

Պրն. Նաճեանը միջին իմաստութեան, միջին փորձառութեան մարդն է,
լուռ ու հանդարտ տառապանքի պոհը որուն կեանքը ոչ մէկ վայրկեան կը
յաջողի ընդվզիլ, ըմբոստանալ, յարձակիլ ու իր անկախութեան տիրանալ:
«Սիրոյ բանաստեղծ»-- ինչու՞ է: Պրն. Նաճեանի մօտ սէրը տիրական
ներկայութիւն է, այն աստիճան որ մոռցնել կու տայ բանաստեղծին թէ
ինք նա'խ արուեստագէտ է ու տողերու, բառերու արհեստաւոր եւ ապա
միայն՝ սիրոյ կրակով տապկուած մարդկային էակ: Սակայն իրականութեան
մէջ մեզի համար մի'այն արհեստաւորը գոյութիւն ունի եւ ջատ ալ կարե-
ւոր է թէ սիրահարը սուտ է թէ իրաւ որովհետեւ միջոցը չունինք անոր
մարդկային իրաւութեան հասնելու: Այդ տառապող մարդուն սրտին երբեք
պիտի չդպնանք, նոյնիսկ վահան Թէքէեանի պարագային, մեր գրականու-
թեան «մեծ սիրահարը» որուն տողը թէ՛ « սէրը եթէ չմեռցնէ՛ կը բու-
ժուի» կը մնայ առեղծուած մը որուն ջուրջ պիտի դառնանք առանց երբեք
գիտնալու թէ մարդ՞ն է թէ արհեստաւոր-արուեստագէտը որ կը խօսի:

Ահա սակայն Նաճեանի տանելի բանաստեղծութիւններէն մին, գրուած
անկեղծութեամբ ու ծառայով: Կը կոչուի «Սիրոյ Օրեր»:

Սիրուց ծնված հրաջք օրեր,
Կարոտանքի խորունկ ծորեր
Թող գամ, ձեր դեմ խոնարհ չոքեմ,
Ձեզ գլուխ տամ, երկրպագեմ:
Լույսին ասեմ արի մեր տուն,
Նույսին ասեմ մնա արթուն,

Խղճի սրտից փուշը հանեմ,
Բարու աչքից ամպը վանեմ:
Արեւի մոտ գնամ ես հյուր,
Շոյեմ նրա վարսերը հուր:
Նողմերն առնեմ, խփեմ քարին,
Ծիածաններ կախեմ սարին:
Իմ սրտի հետ դաջինք կնքեմ,
Խելոքանամ, չքունկեմ:
Բուրի հետ մտերմանամ,
Դառնամ լույսի ու հացի համ,
Միայն սիրով կյանքում այրվեմ,
Միայն երգով հրավառվեմ:

Արդիակա՞ն է այս գրութեան հեղինակը: Ոչ, սակայն այդքան ալ
կարեւոր է այդ պարագան այն վայրկեանէն որ բանաստեղծը ինքզինք կը
նոյնացնէ հայութեան ոգիին հետ եւ որովհետեւ հայութիւնը, ինքը,
արդիական ժողովուրդ մը է տակաւին, այսինքն 21րդ դարուն շարժաթափին
մէջ է մտած ու մէկ աչքը ետին, իր անցած ժամբուն ու միւսը իր
անմիջական կարիքներուն դարձուցած՝ կը փորձէ նուազագոյն գոյութիւն
մը ապահովել: Ու բոլորս այս պայքարին պիտուորագրուած մարտիկներ ենք,
գրագէտ կամ ոչ, սա տարբերութեամբ անջուշտ որ գրագէտէն կ'ակնկալուի
դուրս յորդիլ այդ սահմանումներէն, ազատ ծախրել ամէն կողմ, ըլլալ
աւելի քան Զորեքջաթիին ու իր պպտիկ անձին տագնապին մարդը ու
նետուիլ դուրս ժամանակէն եւ տարածութենէն, ապէն ու լեզուէն՝ եթէ
պէտք ըլլայ՝ արտայայտելու կամ իրականացնելու կամ գտնելու կամ հալա-

ծելու կամ նուաճելու (ջատ յստակ չէ թէ որ^ո բառը կամ բառերը լաւա-
գոյն կերպով կ'արտայայտեն կամ կը բացատրեն կամ կը թելադրեն (աս ալ
ջատ յստակ չէ, դժբախտաբար) այս յղացքը սակայն ստիպուած ենք մօտաւոր
իմաստով մը գոհանալ) իր ծճմարտութիւնը: Պրն. Նաճեանի բանաստեղծական
խառնուածքը տաք որակ մը ունի որ իր մեծագոյն արժանիքն է եւ որու
ջնորհիւ անոր քերթողութիւնը քայլ կը պահէ մեր ժողովուրդի միջինին
հետ, անոր սիրոյ, գուրգուրանքի եւ ապահովութեան ծարաւէն ու մինա-
կութեան լուռ, մռայլ ապրումէն առնելով, գոնէ փորձելով առնել՝ որոշ
ներշնչում: Ասով հանդերձ Պրն. Նաճեան Սփիւռքի եւ Նայաստանի արանքը
ինկած մէկն է, ինչ որ բացառիկ պատեհութիւն է նոր համադրումներ
փորձելու: Չենք խօսիր իր գործին արուեստի որակին մասին -- ատիկա
ջատ հեռուները կը տանի մեզի:

Վահէ Օջական
10 Ապրիլ, 1990
Սան ֆրանսիսքօ